Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
հուլիսի 22-ի N 1208 - Լ որոշման

Հայաստանի Հանրապետության ֆինանսական կրթման ծրագրի 2021-2025 թվականների գործողությունների պլան

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ				
Միջոցառում	Մանրամասներ	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1. «Ֆինանսական կրթությունը դպրոցում» (ՖԿԴ) ծրագրի ընդլայնում՝ ընդգրկելով դպրոցների առնվազն 95%-ը	1) Բոլոր ուսուցիչների վերապատրաստում 2) Դպրոցներում ֆինանսական կրթության ուսուցման արդյունավետության գնահատում 3) Մշտադիտարկում, մենթորինգ և մեթոդական աջակցություն 4) Դասընթացավարների շարունակական վերապատրաստում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	1) ՀՀ ԿԲ (համաձայնությամբ) 2) ՀՀ կրթության տեսչական մարմին	3) 2021-22 թթ. 4) 2021-25 թթ. 5) 2021-22 թթ. 6) 2021-23 թթ.
2. Ֆինանսական կրթությունը դպրոցում ծրագրի կայունության ապահովում	1) Մանկավարժական կրթություն տրամադրող համալսարաններում ֆինանսական կրթման բաղադրիչի ներդրում 2) Լրացուցիչ ուսումնական նյութերի և գործիքների մշակում՝ ըստ անհրաժեշտության	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությու 2) ՀՀ կրթության տեսչական մարմին	1) 2021-25 թթ. 2) 2021-25 թթ. 3) 2021-25 թթ.

	3) Ուսուցիչների համար էլեկտրոնային ուսուցման հարթակի (E-learning paltform) ստեղծման հնարավորությունների դիտարկում			
3. «Ֆինանսական կրթությունը դպրոցում» (ՖԿԴ) ծրագրին խթանող այլ ծրագրերի իրականացում	Համագործակցություն վստահելի կազմակերպությունների հետ և ֆինանսական կրթությունը դպրոցում ծրագրին խթանող ծրագրերի իրականացում. այդ թվում ՝ 1) «Քաղաքացի նախագիծ»՝ նախագծային ուսուցման միջոցով ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների ուսուցում, ֆինանսական կրթման խրախուսում 2) «Բրեյն ռինգ» ֆինանսատնտեսագիտական խաղ-մրցույթ՝ ավագ դպրոցում ձեռնարկատիրական և ֆինանսական կրթություն ուսումնասիրող աշակերտների խրախուսում և մոտիվացիա, նրանցից լավագույն տրամաբանություն և առաջադիմություն ունեցողների բացահայտում և պարգևատրում 3) Ֆինանսական գրագիտության մրցաշարի մշակում և իրականացում	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	1) «ՍԻՎԻՏԱՍ» ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն (համաձայնությամբ) 2) Հայաստանի պատանեկան նվաճումներ (համաձայնությամբ) 3) «ԱՅԲ» կրթական հիմնադրամ (համաձայնությամբ)	2021-25 թթ.

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ				
Միջոցառում	Մանրամասներ	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1. Բուհերում ֆինանսական կրթության ներդրում	Բուհերի հետ ուսանողներին ֆինանսական կրթություն տրամադրելու տարբերակների ուսումնասիրում և դիտարկում, այդ թվում՝ բուհերի հետ բանակցությունների վարում և համաձայնությունների ձեռքբերում, ուսումնական մոդուլի մշակում և թեստավորում, վերապատրաստումների իրականացում ֆինանսական կրթություն դասավանդողների համար, աջակցություն մոդուլի ներդրման գործում, մոնիթորինգ և մեթոդական աջակցություն	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	1.Բուհեր 1) ՀՀ կրթության, 2) գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն 3) ՀՀ կրթության տեսչական մարմին	2021-25 թթ.

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ				
Միջոցառում	Մանրամասներ	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1. Գյուղական բնակավայրերում ֆինանսական	2014-2019 թթ. իրականացված «Ֆինանսական կրթությունը գյուղական համայնքներում» ծրագրի	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների	2021-25 թթ.

կրթության դասընթացների իրականացում	շարունակականության ապահովում, այդ նպատակով հետևյալ միջոցառումների իրականացում՝ 1) Դասընթացավարների վերապատրաստում 2) Վարքագծային գործիքների փորձարկում և արդյունավետ լինելու դեպքում կիրառում 3) Մշտադիտարկում և մեթոդական աջակցություն		նախարարություն	
2. Համագործակցային ծրագրերի իրականացում	Գյուղական բնակավայրերում վստահություն վայելող այլ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության տարբերակների բացահայտում և նպատակահարմարության դեպքում նոր համագործակցային ծրագրերի իրականացում	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	Գյուղաբնակներին աջակցող վստահություն վայելող կազմակերպություններ (համաձայնությամբ)	2021-25 թթ.

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ				
Միջոցառում	Մանրամասներ	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1. Կանանց և ընտանիքների համար ֆինանսական կրթության ծրագրերի	Վստահություն վայելող կազմակերպությունների հետ (օրինակ՝ Վորլդ Վիժն Հայաստան, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ,	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	1) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2021-25 թթ.

իրականացում	Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա և այլն) կանանց և ընտանիքներին համատեղ ֆինանսական կրթություն տրամադրելու տարբերակների ուսումնասիրում և դիտարկում Իրագործելի տարբերակների իրականացում		2) ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցված քների նախարարություն 3) Կանանց և ընտանիքներին աջակցող վստահություն վայելող կազմակերպություն ներ (համաձայնությամբ)	

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Միջոցառում	Մանրամասներ	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1. Միգրանտների համար ֆինանսական կրթության ծրագրերի իրականացում	1) Միգրանտներին աջակցող կազմակերպությունների և գերատեսչությունների հետ ՝ միգրանտների համար ֆինանսական կրթություն տրամադրելու տարբերակների ուսումնասիրում և դիտարկում 2) Աշխատելու նպատակով արտերկիր մեկնելու մտադրություն ունեցող տղամարդկանց, ինչպես նաև արտերկրում աշխատող Հայաստանից մեկնած միգրանտների ընտանիքներին	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	Միգրանտներին աջակցող վստահելի կազմակերպություններ, գերատեսչություններ (համաձայնությամբ)	2021-25 թթ.

	ֆինանսական կրթություն տրամադրելու հնարավորության դիտարկում՝ միգրացիայի ոլորտի պետական լիազորված մարմնի հետ համատեղ 3) Համաձայնեցված տարբերակների իրականացում			

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՈՒՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ				
Միջոցառում	Մանրամասներ	Կատարող	Համակատարող	Ժամկետ
Աշխատողների համար ֆինանսական կրթության ծրագրերի իրականացում	Խոշոր գործատուների հետ՝ աշխատողներին ֆինանսական կրթության տրամադրման վերաբերյալ քննարկումների իրականացում, ֆինանսական կրթությունն իրականացնելու լավագույն միջոցների համաձայնեցում, աշխատավայրերում կադրերի և վերապատրաստման բաժինների աշխատակազմի ուսուցման հնարավորությունների դիտարկում:	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	ՖԿԾ մշակման և իրագործման հանձնաժողովի անդամներ (համաձայնությամբ)	2022-25 թթ.

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՄԱՆ ԿԱՅՔԷՋ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ ԵՎ ԲՋՋԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ				
Միջոցառում	Մանրամասներ	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1. ՀՀ ԿԲ ֆինանսական կրթության կայքի	Ֆունկցիոնալ գործիքների հզորացում, այդ թվում՝ 1) լուսանկարների և	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)		2021-25 թթ.

հզորացում և համանուն սոցիալական հարթակների կիրառման ընդլայնում	պատկերազարդ այլ նյութերի ավելացում 2) հաշվիչների և բջջային հավելվածների քանակի ընդլայնում 3) «Ֆինինֆո» կայքում ընդգրկված ֆինանսական ծառայությունների ցանկի ընդլայնում 4) առցանց ուսուցման դասընթացների և վեբինարների մշակում 5) օգտատերերից հետադարձ կապի հիման վրա կայքի շարունակական բարելավում			
Ֆինանսական կրթության վերաբերյալ հաղորդագրություններ և հիշեցումներ տարածելու նպատակով բջջային տեխնոլոգիաների կիրառման հնարավորության ուսումնասիրում	Իրագործելի տարբերակների իրականացում	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	Վճարահաշվարկային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2021-25 թթ.

8. ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Միջոցառում	Մանրամասներ	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1. Ամենամյա միջոցառումների շարունակական անցկացում («Իմ ֆինանսների ամիս», «Փողի միջազգային շաբաթ», «Խնայողությունների համաշխարհային օր» և այլ միջոցառումներ)	Պետական և մասնավոր հատվածի շահագրգիռ կազմակերպությունների հետ համագործակցում՝ այս միջոցառումներին նրանց մասնակցությունը և աջակցությունն ապահովելու նպատակով	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	1) Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ, (համաձայնությամբ) 2) Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ 3) (համաձայնությամբ), 4) Հայաստանի ապահովագրողների բյուրո 5) (համաձայնությամբ), 6) Հայաստանի բանկերի միություն, 7) (համաձայնությամբ) 8) ՀՀ վարկային կազմակերպությունների միություն, 9) (համաձայնությամբ) 10) Երևանի քաղաքապետարան, 11) (համաձայնությամբ) 12) Պետական և	2021-25 թթ.

			մասնավոր հատվածի այլ կազմակերպություն 13) ներ	

9. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ				
Միջոցառում	**Մանրամասներ**	**Կատարող**	**Համակատարող**	**Ժամկետ**
1. Հանրության լայն շրջանակների համար ըստ անհրաժեշտության ֆինանսական կրթության նախաձեռնությունների իրականացում	ՁԼՄ-ների, սոցիալական հարթակների, սպառողների շահերի պաշտպանության գործընթացում վերհանված խնդիրներից և ստացված ազդակներից, ինչպես նաև այլ աղբյուրների կողմից բացահայտված մարտահրավերների վերաբերյալ լայն հանրության իրազեկման և ֆինանսական կրթության միջոցառումների իրականացում	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	Տվյալ խնդրի հետ առնչություն ունեցող կազմակերպություններ և պետական մարմիններ	2021-25 թթ.

Աղյուսակ 1. Ֆինանսական ունակությունների նվազագույն կոմպետենցիաների մատրից չափահասների համար[1]

[1] Ֆինանսական ունակությունների նվազագույն կոմպետենցիաների մատրից չափահասների համար (The Financial Competency Matrix for Adults) հասանելի է https://www.afi-global.org/publications/3316/The-Financial-Competency-

Ներառում է անձնական ֆինանսների կառավարման յոթ թեմատիկ ուղղությունների վերաբերյալ այն գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքը և վարքագիծը, որոնք անհրաժեշտ են ֆինանսապես ունակ համարվելու համար:

ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ՈՒՆԱԿ ՄԱՐԴԸ ՊԵՏՔ Է ՆՎԱՃԱԳՈՒՅՆԸ...				
	Ա. ԳԻՏԵԼԻՔ	Բ. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	Գ. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	Դ. ՎԱՐՔԱԳԻԾ
Ա. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԻՐԱՌՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐԵԼԻՍ)	▸ Իմանա ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները ▸ Իմանա ֆինանսական ծառայությունների տեսակները ▸ Իմանա ՀՀ Կենտրոնական Բանկի հիմնական նպատակները ▸ Իմանա մակրոտնտեսական հիմնական հասկացությունները, այդ թվում՝	▸ Կարողանա ըմբռնել գնաճի ազդեցությունն իր կենսամակարդակի վրա ▸ Կարողանա հաշվարկել իր ֆինանսների վրա արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ▸ Կարողանա գնահատել ռեպո տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը վարկերի տոկոսադրույքների վրա	▸ Վստահի ֆինանսական համակարգի հիմնական կառույցներին ▸ Կարևորի ֆինանսական եւ տնտեսական ցուցանիշներին հետևելը	▸ Օգտվի մի քանի ֆինանսական ծառայություններից ▸ Հետևի ֆինանսական և տնտեսական կարևոր ցուցանիշներին

Matrix-for-Adults-A-Policy-Framework

ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ՈՒՆԱԿ ՄԱՐԴԸ ՊԵՏՔ Է ՆՎԱՃԱԳՈՒՅՆԸ...				
	Ա. ԳԻՏԵԼԻՔ	Բ. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	Գ. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	Դ. ՎԱՐՔԱԳԻԾ
	- գնաճը - արտարժույթի փոխարժեքը, - ռեպո տոկոսադրույքը - վարկերի եւ ավանդների տոկոսադրույքներ			
Բ. ԱՆՁՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	▸ Իմանա, թե ինչ է բյուջեն ▸ Իմանա եկամուտների տեսակները, դրանք տարբերի ֆինանսական մուտքերից ▸ Իմանա ծախսերի տեսակները, դրանք տարբերի ֆինանսական ելքերից ▸ Իմանա փոփոխուն և հաստատուն ծախսերը, դրանք տարբերի իրարից	▸ Կարողանա քայլեր ձեռնարկել իր բյուջեի դեֆիցիտի ծածկման ուղղությամբ ▸ Կարողանա ծախսերը դասակարգել ըստ առաջնահերթության ▸ Կարողանա իրականացնել իր բյուջեի հսկողություն (մշտադիտարկում) ▸ Ըմբռնի ռիսկի և եկամտաբերության միջև եղած կապը	▸ Կարևորի բյուջետավորումը և պլանավորումը ▸ Կարևորի եկամուտների և ծախսերի գրառումը՝ որպես դրանց հսկողության (մշտադիտարկում) ձև ▸ Կարևորի ապահովագրական ծառայությունների օգտագործումը	▸ Կարողանա ճիշտ կառավարել սեզոնային եկամուտները ▸ Նախապես կազմի բյուջե և կատարի պլանավորում ▸ Իր ծախսերը կատարի այնպես, ինչպես պլանավորում է ▸ Գրառի իր եկամուտները և ծախսերը ▸ Ունենա բանկային հաշիվ

ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ՈՒՆԱԿ ՄԱՐԴԸ ՊԵՏՔ Է ՆՎԱՁԱԳՈՒՅՆԸ...				
	Ա. ԳԻՏԵԼԻՔ	Բ. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	Գ. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	Դ. ՎԱՐՔԱԳԻԾ
	▸ Իմանա, թե ինչ է զուտ եկամուտը ▸ Իմանա, թե ինչ գործողություններ կարող է անել տարածված ֆինանսական գործիքներով՝ բանկային հաշվով և վճարային քարտերով ▸ Իմանա իր անձնական ֆինանսների կառավարման վրա ազդող ֆինանսական հիմնական ռիսկերը ▸ Իմանա ապահովագրական ծառայությունների տեսակները	▸ Կարողանա կատարել ապահովագրական ծառայության կշռադատված ընտրություն		▸ Ունենա վճարային քարտ ▸ Հետևի իր բանկային / վճարային քարտային հաշվի քաղվածքներին ▸ Օգտվի ոչ պարտադիր ապահովագրական ծառայություններից
Գ. ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ	▸ Իմանա խնայողություններ կատարելու նպատակը	▸ Կարողանա իրականացնել ռիսկերի դիվերսիֆիկացիա	▸ Հակված լինի պարբերաբար կատարել խնայողություններ	▸ Կատարի խնայողություններ ցանկացած դեպքում

ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ՈՒՆԱԿ ՄԱՐԴԸ ՊԵՏՔ Է ՆՎԱՁԱԳՈՒՅՆԸ...				
	Ա. ԳԻՏԵԼԻՔ	Բ. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	Գ. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	Դ. ՎԱՐՔԱԳԻԾ
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	▸ Իմանա, որ խնայողությունների հաշվին ներդրումներ անելով կարելի է ստանալ հավելյալ եկամուտներ ▸ Իմանա, թե ինչի մեջ կարելի է ներդնել խնայողությունները ▸ Իմանա՝ դիվերսիֆիկացիան ինչ է ▸ Իմանա տոկոս հաշվելու բանաձեւը ▸ Իմանա՝ բարդ տոկոսն ինչ է ▸ Իմանա՝ կապիտալացումն ինչ է ▸ Իմանա Հայաստանում ավանդների երաշխավորման համակարգի մասին	▸ Կարողանա կատարել ավանդի կշռադատված ընտրություն ▸ Կարողանա կիրառել տոկոսի հաշվարկման իր գիտելիքները ▸ Կարողանա հաշվարկել բարդ տոկոս ▸ Ըմբռնի կապիտալացման ազդեցությունը եկամտաբերության վրա ▸ Իմանա ավանդների հատուցման չափը ▸ Կարողանա կատարել արժեթղթերի ձեռքբերման կշռադատված ընտրություն ▸ Իմանա անհատական կենսաթոշակային հաշվի կառավարման մեթոդները	ֆինանսական ֆորմալ ծառայությունների միջոցով ▸ Կարևորի երկարաժամկետ խնայողությունների կատարումը ▸ Կարևորի խնայողությունները տարբեր ֆինանսական գործիքների մեջ ներդնելը	▸ Ապահովի խնայողությունների նպատակայնությունը ▸ Խնայողություններ անի մի քանի նպատակների համար ▸ Խնայողությունները ներդնի ֆինանսական ֆորմալ գործիքների մեջ ▸ Ունենա անհատական կենսաթոշակային հաշիվ ▸ Պարբերաբար կառավարի իր անհատական կենսաթոշակային հաշիվը

ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ՈՒՆԱԿ ՄԱՐԴԸ ՊԵՏՔ Է ՆՎԱՃԱԳՈՒՅՆԸ...				
	Ա. ԳԻՏԵԼԻՔ	Բ. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	Գ. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	Դ. ՎԱՐՔԱԳԻԾ
	▸ Իմանա արժեթղթերի տեսակները ▸ Իմանա այն մասին, որ կուտակային կենսաթոշակային համակարգը խնայողությունների ներդրման ձև է			
Դ. ՊԱՐՏՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	▸ Իմանա պարտքի տեսակները ▸ Իմանա պարտք վերցնելու աղբյուրները ▸ Իմանա վարկերի տեսակները ▸ Իմանա և տարբերի վարկի անվանական և փաստացի տոկոսադրույքները	▸ Կարողանա պարտք վերցնել իր հնարավորությունների չափով ▸ Վարկ ստանալիս կարողանա կատարել կշռադատված ընտրություն ▸ Իմանա վարկային բյուրոյի կողմից իր անձնական տվյալների՝ այլ անձանց տրամադրման կարգը	▸ Կարևորի և նախընտրի ֆորմալ աղբյուրներից պարտք վերցնելը ▸ Չընդունի պարտքով պարտք մարելու երևույթը ▸ Կարևորի պարտքերի մարման ժամանակացույց կազմելը	▸ Օգտվի պարտք վերցնելու ֆորմալ աղբյուրներից ▸ Պարտք վերցնի իր հնարավորությունների չափով ▸ Պրակտիկայում պարտքով պարտք չմարի ▸ Ունենա պարտքի մարման ժամանակացույց ▸ Պարտքերը մարի ժամանակին

ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ՈՒՆԱԿ ՄԱՐԴԸ ՊԵՏՔ Է ՆՎԱՃԱԳՈՒՅՆԸ...				
	Ա. ԳԻՏԵԼԻՔ	Բ. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	Գ. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	Դ. ՎԱՐՔԱԳԻԾ
	▸ Իմանա վարկի ապահովության միջոցները ▸ Իմանա վարկային բյուրոյի մասին	▸ Իմանա պարտքի մարման ձևերը		
Ե. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ «ԳՆՈՒՄՆԵՐ»	▸ Իմանա ֆինանսական ծառայությունների տեսակների և պայմանների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները	▸ Կարողանա կարճ ժամկետում և տարբեր աղբյուրներից հայթայթի ֆինանսական տեղեկատվություն ▸ Կարողանա հարկ եղած դեպքում պարզաբանում ստանալ ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ	▸ Կարևորի և նախընտրի տեղեկատվության ֆորմալ աղբյուրները ▸ Կարևորի ֆինանսական տեղեկատվության համեմատության անցկացումը ▸ Կարևորի ֆինանսական մասնագիտական խորհրդատվության դերը ▸ Հակված լինի վճարել ֆինանսական մասնագիտական	▸ Ֆինանսական ծառայության ընտրության նպատակով հավաքի և համեմատի ֆինանսական տեղեկատվություն ▸ Ֆինանսական տեղեկատվություն հավաքի տարբեր աղբյուրներից ▸ Հետևի ֆինանսական տեղեկատվության աղբյուրներին ▸ Հարկ եղած դեպքում օգտվի ֆինանսական մասնագիտական խորհրդատվությունից

ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ՈՒՆԱԿ ՄԱՐԴԸ ՊԵՏՔ Է ՆՎԱՁԱԳՈՒՅՆԸ...				
	Ա. ԳԻՏԵԼԻՔ	Բ. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	Գ. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	Դ. ՎԱՐՔԱԳԻԾ
			խորհրդատվության համար	
Զ. ՍԵՓԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	▸ Ունենա սեփական իրավունքների պաշտպանության ձևերի հստակ պատկերացում ▸ Իմանա իրավունքների պաշտպանության պաշտոնական / իրավական ուղիները ▸ Իմանա Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին	▸ Իրավունքների խախտման դեպքում իմանա արդյունավետ քայլերի հերթականությունը	▸ Իրավունքների պաշտպանության հարցում կարևորի պաշտոնական / իրավական ուղիները ▸ Վստահի իրավունքների պաշտպանության պաշտոնական/ իրավական ուղիներին ▸ Իրավունքների պաշտպանության հարցում ավելի շատ վստահի պաշտոնական / իրավական ուղիներին ▸ Կարևորի Ֆինանսական համակարգի հաշտարարի դերը	▸ Պայմանագիր ստորագրելիս կարդա և ըմբռնի նրա ամբողջ բովանդակությունը ▸ Ֆինանսական հաստատության հետ վեճ ունենալիս ձեռնարկի այդ վեճի լուծման քայլեր ▸ Ֆինանսական հաստատության հետ վեճ ունենալիս առաջնորդվի պաշտոնական/ իրավական ուղիներով

ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ՈՒՆԱԿ ՄԱՐԴԸ ՊԵՏՔ Է ՆՎԱՁԱԳՈՒՅՆԸ...				
	Ա. ԳԻՏԵԼԻՔ	Բ. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	Գ. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	Դ. ՎԱՐՔԱԳԻԾ
Է. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՑ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏՎԵԼԸ (ՁԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ)	▸ Իմանա ֆինանսական զեղծարարության կամ խարդախության հիմնական ձևերը (օրինակները)	▸ Տարբերակի ֆինանսական զեղծարարությանը բնորոշ տեղեկությունները (ազդակները)	▸ Կարևորի ֆինանսական զեղծարարության կամ խարդախության մասին տեղեկացված լինելը ▸ Չվստահի անծանոթ աղբյուրից ստացված գրավիչ ֆինանսական առաջարկներին	▸ Ուշադրություն դարձնի ֆինանսական զեղծարարությունների և խարդախությունների վերաբերյալ տեղեկատվությանը ▸ Մերժի անծանոթ աղբյուրից ստացված գրավիչ ֆինանսական առաջարկները

Օգտակար հղումներ

ՀՀ Կենտրոնական բանկ	www.cba.am
ՀՀ ԿԲ «Ֆինանսներ բոլորի համար» կրթական կայք	www.abcfinance.am
ՀՀ ԿԲ «Ֆինինֆո» ֆինանսական տեղեկատու կայք	www.fininfo.am
ՀՀ ԿԲ Այցելուների կենտրոն	www.visitorcentre.cba.am
Գերմանական Խնայողական Բանկերի Հիմնադրամ (ԳԽԲՀ)	www.sparkassenstiftung.de
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության	www.escs.am
ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	www.mtad.am
ՀՀ ֆինանսների նախարարություն	www.minfin.am
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	www.mlsa.am
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	www.hti.am
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	www.mineconomy.am
ՀՀ կրթության տեսչական մարմին	www.eib.am
Երևանի քաղաքապետարան	www.yerevan.am
Ֆինանսական ներգրավվածության միություն ՖՄՆ(AFI)	www.afi-global.org
Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն ՏՀԶԿ (OECD)	www.oecd.org

Համաշխարհային բանկ ՀԲ (WB)	www.worldbank.org
Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ	www.fsm.am
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ	www.adgf.am
Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո	www.appa.am
Հայաստանի ֆոնդային բորսա	www.amx.am
Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա	www.cda.am
«ԱՔՌԱ» վարկային բյուրո	www.acra.am
«ԱՐՔԱ» ազգային վճարային համակարգ	www.arca.am
Հայաստանի բանկերի միություն	www.uba.am
Հայաստանի վարկային կազմակերպությունների միություն	www.ucora.am
«Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ	www.jaarmenia.org
«ՍԻՎԻՏԱՍ - Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն» ՀԿ	www.civitasarmenia.am
«ԱՅԲ» կրթական հիմնադրամ	www.ayb.am
Ֆինանսական շուկայի անդամների ասոցիացիա	www.finarm.am
«ԱՅՍԵԿ» միջազգային երիտասարդական ոչ առևտրային հասարակական կազմակերպություն	www.aiesec.org
«ՔՈԱՖ – Հայաստանի մանուկներ» ՀԿ	www.coafkids.org
«Աֆլաթուն» միջազգային ոչ հասարակական կազմակերպություն	www.aflatoun.org

«Դասավանդի՛ր Հայաստան» կրթական հիմնադրամ	www.teachforarmenia.org
«Վորլդ Վիժն Հայաստան» ՀԿ	www.wvi.org/hy/armenia
«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ	www.aywa.am
Աղքատների աջակցության խորհրդատվական խումբ ԱԱԽԽ (CGAP)	www.cgap.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ